

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ն ՈԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
38	POWERSEAL	Olympus	<p>Առաջադեմ բիպոլյար մկրատ կոագուլացիոն Էրգոնոմիկ ատրճանակային բռնակով Էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Գործիքը ստերիլ է, մեկանգամյա օգտագործման, նախատեսված լապարոսկոպիկ և բաց վիրահատական միջամտությունների համար, ապահովում է մինչև 7 մմ տրամագծով անոթների, ներառյալ թոքային անոթների, հուսալի կոագուլյացիա և հատում՝ ձևավորելով ամուր անոթային «fusion-seal» հերմետիկ շերտ: Միջին կոագուլացիայի ժամանակը չի գերազանցում 3,3 վայրկյանը: Աշխատանքային մասը պատրաստված է բժշկական նշանակության կոռոզիոնակայուն պողպատից՝ Էլեկտրամեկուսացված ցողունով, ապահովելով բիպոլյար բարձր հաճախականության (RF) էներգիայի վերահսկվող և ադապտիվ մոդուլացված մատակարարում, նվազագույն լատերալ ջերմային տարածում, ցածր մնացորդային ջերմություն ակտիվացումից հետո և հյուսվածքների կպչունության նվազեցում: Գործիքը ունի կոր և նեղացող դիստալ ծնոտային ծայր՝ բարդ անատոմիական</p>

գոտիների հասանելիության համար, երկաստիճան (double-action) ծնոտների փակման մեխանիզմ՝ հյուսվածքների հուսալի բռնման և արդյունավետ դիսեկցիայի նպատակով, երկարացված ծնոտներ և հատման գիծ՝ կոագուլյացիայի և հատման արդյունավետության բարձրացման համար: Ցողունի տրամագիծը 5 մմ, ցողունը՝ 35 սմ երկարությամբ՝ լապարոսկոպիկ վրահատություններում կիրառելու համար: Կոնստրուկցիան ապահովում է ցողունի առնվազն 330° սահուն ռոտացիա՝ օպերացիոն դաշտում ճշգրիտ դիրքավորման համար, շրջանաձև (wrap-around) էներգիայի ակտիվացման կոճակ՝ էներգիայի մատակարարման հնարավորությամբ ամբողջությամբ կամ մասնակի փակված ծնոտների պայմաններում, նվազեցված ուժով գործող հատման ակտիվացման մեխանիզմ՝ առանց կտրման ամրության և դիմացկունության նվազեցման, ինչպես նաև օպտիմիզացված սեղմման ուժ ծնոտների փակման ժամանակ՝ պահպանելով անոթների կայուն հերմետիզացիայի համար անհրաժեշտ կոմպրեսիոն ճնշումը: Սարքը ապահովում է ծնոտների latch-on և latch-off ֆիքսացիոն ռեժիմներ՝ վիրաբուժական տեխնիկայի պահանջներին համապատասխան և համատեղելի է կլինիկայում առկա Olympus ընկերության ESG-410 էլեկտրավիրաբուժական գեներատորների հետ և ունի պաշտոնական համատեղելիության փաստաթուղթ:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО Интермед Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ПГУЧ-ЕЦДЦПЗР-26/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
38	-	-	-